

ԶՄՐԱՆ ԵՐԳՎԵՐԻՑ

Գացին սոխակներ, և ան նըրանց հետ
Թրուն իմ յոյսեր, իմ ոսկի յոյսեր.
Եկաւ ճըմեռը, և ան նորա հետ
Լացին իմ աշեր, իմ այրուած աշեր:

Զայն ծըպտում չըկայ սառ ճամպաներում.
Քամին սովում է սարի վերկից.
Վազուկ ջըրերը էլ յեն վրգվում.
Անտառն է զըրկուել նախուն հաւքերից:

Երկնքում աստղեր էլ չեն երեւում,
Չէ փայլում լուսնակ, չէ երգում սոխակ.
Եւ անտառներում և այգիներում
Զիւնը թափուամ է կաթի պէս ներմակ:

Սիրտարս այրուած, աշերս թըրջըրած
Երկինք եմ նայում տըխուր ակնարկով.
Ախ անոյշ գարուն, էլ ծաղիկ գարուն,
Դու ե՞րբ պիտի զաս անոյշ ծաղկունքով . . .

ԼՈՒՍՆԱԿ ԶԱՆ

Ախ չե՞ս տեսած, լուսնակ ջան,
Ի՞նչպէս աւերդարձըրին
Մեր երկիրը Հայաստան,
Էն աննըման մեր լինին:

Լացիր Եարաք դուն երկնից,
Տըրիեց դէմքըր, լուսնակ ջան.
Այժմը էլ գուն երկնքից
Տեսնում ես հայ կիրկեան:

Նայիր լուսնակ, միշտ նայիր,
Գուցէ դու էլ արտասուես.
Լուսնակ այսաեղ դու նայիր,
Գուցէ դու էլ լաց լինիս . . .

Ախ էլ պէտք չես, լուսնակ ջան,
Էլ յօյս չըկայ մեր սըրտում.
Աւերակ է կիրկիքան,
Էլ կեակը չըկայ նրանում:

Նայիր լուսնակ իմ սըրտին,
Դու էլ զընա այս տեղից.
Ինձ մի համբոյր տուր վերջին
Էլ մի՛ փայլիր հայ երկնից:

Ա Բ Ե Խ Ի Ն

Պայծառ, փայլուն, ոսկի արև
Ինչո՞ւ մութ ես ինձ թըւում.
Օսար արև, ոսկի արև
Ի՞նչ կայ ծաղիկ իմ սըրտում . . .

Ի՞նչ է այրուում ջիվան հոգում,
Ի՞նչ կայ այնաեղ, ա՞ի ի՞նչ կայ.
Լիյ ջան արև, էս աշխարհում
Ախ ես ինչքան լաց եղայ:

Ոիրտս այրուած, օտա՞ր արև,
Մութ ես թըւում դու ինծի.
Ին լեռները, էն վարդ ճորեր
Ջըրերը իմ վաթանի . . .

Անոյշ վաթան, ջան հայրենիք
Սիրտս այրուած է, այրուած,
Գու կարօտը վառ անուշիկ
Ծաղիկ սըրտում է վառուած:

Փայլուն, պայծառ, օտա՞ր արև
Մութ ես թըւում դու ինծի.
Հայրենիքին վառ կարօտը
Իմ սըրտումը շամ կ'այրի . . .

ԱՐԱՅԻՆ - ԵՐԿԱՓ



Ա Պ Խ Ա Բ

Դու ջուրերու ազատ ծընունդ,
Հեղուկ գունտին նըկուն իշխան,
Ի՞նչպէս ձըզած հայրենի տունդ,
Կը պասկին հոս, քարին վըրայ:

Ահա արգէն դու հոգեթունդ,
Կը գալարուիս մուխի նման,
Ջուր հասցուցէք, ջուր օգոնութեան,
Պիտի մենին ձուկն անոշնունդ:

Նըժգեն կ'ողբամ, ես ալ, ու կեանք,
Հնոու հողէս և վարդերէս,
Մեր արշալոյսը վարդերէս:

Ո՞հ, մինչև ե՞րբ այս տառապանք.
Հնոու քեզմէ, պիտի մեռնիմ,
Հայրենիք իմ, Հայրենիք իմ:

ԳՅ. ԹէԱԼԱԼԵԱՆ

Ա. Պոյիս
ի 19 դեկտեմբեր 1909